ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/11

ք.Երևան «28» հոկտեմբերի 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ.Եսայանի, որը գործում է «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացվում՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 140 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **58 000 000 (Հիսունութ միլիոն)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի հավելված

N 3 վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն

պայմանագրի N 1, N 2, N 2.1, N 3, N 4, և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք. Երևան, Շիրակի փակուղի 4
ՀՀ ֆինանսների նախարարության	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011030534	Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 01807983
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝	«ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի տնօրեն՝
Է.Գևորգյան	**Ռ.Եսայան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

«28» հոկտեմբերի 2020թ. կնքված Հավելված թիվ 1
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների

CPV-45611300/6

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը /ՀՀ դրամ/	Ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6
	Բաժին 1 Ընդհանուր շինարարական աշխատանքներ				
	Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Ապամոնտաժել օդորակիչների խանգարող արտաքին բլոկները և գլխավոր ճակատի լուսարձակները, պահպանել վերանորոգումից հետո վերատեղադրելու նպատակով	հատ	89	2500	222500
2	Ապամոնտաժել ալյուկաբոնդե երեսապատումները Ա-Դ և 1-6 ճակատներից՝ բացառությամբ գլխավոր մուտքինը, հանձնել տնօրինությանը	մ^2	767.5	1200	921000
3	Ապամոնտաժել ալյուկաբոնդի ալյումինե խողովակներով երեսապատումը	մ	1516.5	300	454950
4	Ապամոնտաժել միջպատուհանային տարածքներում ամրացրած ալիքավոր ցինկապատ թիթեղները	մ^2	578.4	900	520560
5	Ապամոնտաժել 6-1 ճակատի դեֆորմացված և թափված տրավերտինե երեսապատումները	մ^2	22	1000	22000
6	Փայտե պատուհանների և փայտե վիտրաժների ապամոնտաժում շեպերի քանդումով	մ^2	77.05	2000	154100
7	Ապամոնտաժման ժամանակ օգտագործել մեքենա մեխանիզմներ	ժամ	56	8000	448000
8	Շին աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռավորության վրա	մ^3	30.1	2000	60200
	Տանիքի ապամոնտաժման աշխատանքներ				0
1	Ապամոնտաժել երկու մեծ ալեհավաքները, յոթ սովորական անտենաները և չորս ափսեանման ալեհավաքները, պահպանել վերանորոգումից հետո վերատեղադրելու նպատակով	հատ	13	10000	130000
2	Բացել տանիքի պարապետի թիթեղյա հատվածները , ապամոնտաժել	մ^2	52	1300	67600
3	Ապամոնտաժել տանիքի առկա հոսակները մետաղական խողովակի հետ միասին L=1,5մ	հատ	2	1200	2400
4	Տանիքի աղբի հավաքում և տեղափոխում շենքից դուրս (525,8մ^{2}X0,05մX1,0տ/մ^3)	տ	26.3	2000	52600
5	Շին. աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռ.վրա	տ	26.3	1500	39450
	Վիտրաժներ				

1	Մետաղապլաստե վիտրաժներ -խուլ երկշերտ ապակեփաթեթով -4X12X4մմ -պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ -գույնը սպիտակ -բացվող	մ²	7.25	26000	188500
2	Մետաղապլաստե վիտրաժներ -խուլ երկշերտ ապակեփաթեթով -4X12X4մմ -պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ -գույնը սպիտակ -չբացվող	մ²	17.15	26000	445900
	Պատուհաններ				
1	Մետաղապլաստե պատուհաններ-երկշերտ ապակեփաթեթով-4X12X4մմ-պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ-գույնը սպիտակ-բացվող	մ²	37.8	30000	1134000
2	Մետաղապլաստե պատուհաններ -երկշերտ ապակեփաթեթով -4X12X4մմ -պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ -գույնը սպիտակ -չբացվող	մ²	15.1	26000	392600
3	Պլաստիկ պատուհանագոգերի (b=400մմ) արժեքը	մ	41	4500	184500
4	Պատուհանների արտաքին ջրահեռացման հարթակների պատրաստում շագանակագույն ցինկապատ թիթեղով , d=0,55մմ (332,0մb=0,1մ)	մ²	33.2	8500	282200
5	Շեպերի սվաղումը գաջե շաղախով	մ²	30	5000	150000
6	Շեպերի սվաղի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով	մ²	30	3000	90000
	Տանիք				
1	Տանիքի մտոցի պատերի սվաղում ցեմ.ավազային շաղախով b=30մմ	մ²	9	2700	24300
2	Մետաղական ցանցի տեղադրում ցեմ/ավազային սվաղի տակ Փ3Բp-I ք.150X150	մ²	9	1800	16200
3	Ներկել լավորակ ճակատային ներկով, դարչնագույն երանգի	մ²	9	3000	27000
4	Գեոտեքստիլ 150գ/քմ	մ²	700	900	630000
5	ՊՎԽ մեմբրան' ներառյալ մտոց	մ²	684.6	12000	8215200
6	Ամրացման դետալներ	մ²	570	1200	684000
7	Ալյումինե շրիշակ ' ներառյալ մտոց	մ	193.5	900	174150
8	Ջրահեռացման ձագար	հատ	2	15000	30000
9	պոլիվինիլքլորիդային ջրահեռացման խողովակ d=110մմ, L=1500մմ 2 հատ	մ	3	2900	8700
10	Պոլիուրետանային հերմետիկ	հատ	7	3000	21000
11	Կմաղքի իրականացում մետ.խողովակից 40X20X2մմ L=262,6մ	տ	0.446	760000	338960
12	Կմաղքի յուղաներկում 2 շերտով	մ²	15.75	1900	29925
13	Ամրացնել կտրած պարապետի գոգնոցի թիթեղները պարապետի պատին դյուբելներով	տեղ	305	270	82350

14	Փակել տանիքի պարապետի հատվածը շագանակագույն ցինկապատ թիթեղով , d=0,55մմ	մ²	52	7500	390000
15	Մեխանիզմներ և տրանսպորտային ծախսեր	հատ	1	607518	607518
16	Վերատեղադրել երկու մեծ ալեհավաքները, յոթ սովորական անտենաները և չորս ափսեանման ալեհավաքները, պահպանել վերանորոգումից հետո վերատեղադրելու նպատակով	հատ	13	10000	130000
	Արտաքին շին.աշխատանքներ				
1	Գետնախարիսխի վրա գտնվող մաքրված տարածքները երեսապատել բազալտե սալիկներով d=30մմ ցեմ.ավազային շաղախի վրա	մ²	17	18000	306000
2	Մետաղական ցանցի տեղադրում Φ4Вр-I 50Х50մմ	մ²	17	1800	30600
3	Պատի պանելների կարանները մաքրել առկա սվաղից L=682,0մ 3սմ լայնությամբ	մ²	20.5	400	8200
4	Պատի պանելների կարանները մաքրելուց հետո մշակել 3սմ լայնությամբ պոլիմերցեմենտային լուծույթով ներծծված խծուծով L=682,0մ	մ²	20.5	16500	338250
5	Վերականգնել պատի պանելների վնասված հատվածները պոլիմերցեմենտային շաղախ.	մ²	220	1800	396000
6	Պատի պանելների կոր և կողային հատվածները ծեփամածկել ճակատային լավորակ ծեփամածիկով և ներկեւ ճակատային ներկով	մ²	2198.7	2830	6222321
7	Գլխավոր ճակատի տրավերտինով երեսապատված պատի պանելների վնասված հատվածները և մյուս երեք ճակատների տրավերտինե երեսապատումները լրացնել նոր տրավերտինե սալերով	մ²	47.4	19000	900600
8	Պատերի մակերեսների մաքրում սկավառակով	մ²	383.8	4500	1727100
9	6-1 ճակատի տրավերտինե սալիկների ապամոնտաժված հատվածի սվաղում ցեմ.ավազային շաղախով,	մ²	25	2700	67500
10	Մետաղական ցանցի տեղադրում ցեմ/ավազային սվաղի տակ Φ3Вр-I ք.150Х150	մ²	25	1800	45000
11	Այնուհետև ամբողջությամբ ծեփամածկել և ներկել ճակատային ներկով, տրավերտինի երանգին համապատասխան	մ²	50.6	3000	151800
12	Շենքի անկյունային հատվածների մետաղական անկյունակները երեսապատել ֆիբրոցեմենտային սալերով 20սմ լայնությամբ 8մմ հաստության	մ²	52.8	10200	538560
13	Միջպատուհանային տարածքների ջերմամեկուսացում հանքային բամբակի սալերով 50մմ հաստության ամրացում հատուկ սոսնձոփոչ պակաս 100կգ/մ3	մ²	745	1500	1117500
14	Հանքային բամբակը խցաբութակներով ամրացում	հատ	5215	200	1043000
15	Միջպատուհանային տարածքները երեսապատել ֆիբրոցեմենտային սալերով 100սմ լայնությամբ 8մմ հաստության	մ²	745	10200	7599000
16	Անշարժ բարձակ WF KL-2 13-080	հատ	6810	200	1362000
17	Ուղղորդիչ CPA 3472	մ	65	250	16250

18	Ուղղորդիչ CPA 2278-17	մ	3095	230	711850
19	Խցիչ UE-6660036	մ	3225	200	645000
20	Կարանների ուղղաձիգ շերտաձող ցինկապատ b=0,55մմ	մ	55	700	38500
21	Կարանների անկյունային շերտաձող ցինկապատ b=0,55մմ	մ	135	700	94500
22	Կարանների հորիզոնական շերտաձող ցինկապատ b=0,55մմ	մ	150	700	105000
23	Երեսապատման և շին. աշխատանքների ավարտից հետո վերատեղադրել օդորակիչների արտաքին բլոկները և լուսարձակները	հատ	89	2500	222500
24	Շին. աշխատանքների ժամանակ օգտագործել մեքենա մեխանիզմներ	ժամ	360	8000	2880000
	Ընդամենը 1-ին բաժնի				43939394
	Շահույթ 10%				4393939
	Ընդամենը				48333333
	ՍԱՀ - 20 %				9666667
	Ընդհանուրը				58000000

***Կապալառուն աշխատանքները կատարում է ք.Երևան Ծովակալ Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030534
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի փակուղի 4
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի տնօրեն՝

Դ.Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«22» հոկտեմբերի 2021թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԾՈՎԱԿԱԼ ԻՍԱԿՈՎԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանջին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Պատուհանների,վիտրաժների քանդում շեպերի հետ միասին	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	14 օր
2	Պարապետի թիթեղի և հոսակների ապամոնտաժում	Կողմերի միջև կնքվող պայմանագիիրը ուժի մեջ մտնելու օրվանից 7 օր հետո	7 օր
3	Տրավերտինե երեսապատման քանդում	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 14 օր հետո	14 օր
4	Արտաքին պատերի ալյուկաբօնդի,թիթեղյա ծածկույթի քանդում	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 14 օր հետո	28 օր
5	Շինարարական աղբի բարձում և տեղափոխում	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 28 օր հետո	28 օր
6	ՊՎԽ մեմբրանի փռում և տեղադրում գեոտեքսիլի հետ,պարապետի թիթեղի տեղադրում	Կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 21 օր հետո	49 օր
7	Պատուհանների և վիտրաժների տեղադրում, շեպերի սվաղում	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 49 օր հետո	21 օր
8	Ֆիբրոցեմենտե թերթով երեսապատում հանքային բամբակի տեղադրումով	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 70 օր հետո	56 օր
9	Տրավերտինե սալերով լրացումներ և սկավառակով մաքրում	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 98 օր հետո	14 օր
10	Ց/ավազային շաղախով պատերի սվաղում, ծեփամածկում և ներկում	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օր հետո	7 օր
11	Պատի պանելների մակերեսների կարգավորում, ծեփամածկում և ներկում ճակատային ներկով	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օր հետո	28 օր
12	Տանիքի մտոցի պատերի սվաղում և ներկում ճակատային ներկով	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ	14 օր

		մտնելու օրվանից 112 օր հետո	
13	Տանիքում ապամոնտաժված ալեհավաքների վերատեղադրում	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 112 օր հետո	14 օր
14	Պատերից ապամոնտաժված օդորակիչների արտաքին բլոկների, լուսարձակների վերատեղադրում	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 126 օր հետո	14 օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030534
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի փակուղի 4
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի տնօրեն՝

Դ.Եսայան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2.1
«23» հոկտեմբերի 2021թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի

Երևան քաղաքի, Ծովակալ Իսակովի 10 հասցեի վարչական շենքի վերանորոգման համար օգտագործվելիք նյութերի նվազագույն երաշխիքային ժամկետները

Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետը՝ 2 տարի

N/N	ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
1.	Գեոտեկստիլ	30 տարի
2.	ՊՎՔ մեմբրան	10 տարի
3.	Ֆիբրոցեմենտային սալ	30 տարի
4.	Մետաղապլաստե պատուհաններ	30 տարի
5.	Մետաղապլաստե վիտրաժներ	30 տարի
6.	Պլաստիկ պատուհանագոքեր	10 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030534
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱՌ-777» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի փակուղի 4
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983
«ԱԳԱՌ-777» ՍՊԸ-ի տնօրեն՝

Դ.Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«28» հոկտեմբերի 2021 թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	5113	45611300/6	Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ										58 000 000	58 000 000	58 000 000	**58 000 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030534
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱՌ-777» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի փակուղի 4
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983
«ԱԳԱՌ-777» ՍՊԸ-ի տնօրեն՝

Գ.Եսայան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 4
« 28 » հոկտեմբերի 2021 թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«28» հոկտեմբերի 2021թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն